

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՅԼԵԻԱՅԼԻ

Ս. ԾՆԵԳԵԱՆ ՇՆՈՐՀԱԴՐԱՊԵՏԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

ԵՐՈՒՍԱԳԼԵՄԻ ՅՈՒՆԱՅ ՊԱՏՐԻԱՐԽԱՆ

Հինգ տարի ընդմիջումէն յետոյ, 9 Յունուար, 2024-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Դարիպեան Սրբազան Հօր, շնորհաւորութեան գնաց Յունաց Ամենապատիւ Տ. Թէոփիլոս III Պատրիարքին եւ Միաբանութեան:

Լուսարարապետ Սրբազան Հօր եւ Յունաց Պատրիարքի փոխադարձ շնորհաւորական խօսքերէն յետոյ անդրադարձ եղաւ երկու Պատրիարքութիւններու միջեւ եղած փոխյարաբերութիւններուն եւ անոնց բարեւաման: Անդրադարձ եղաւ նաեւ «Կովերու պարտէզ»ին շուրջ տեղի ունեցող անցուղարձերուն:

ՏԱՐԵՄՈՒՏ

Ինչպէս ամէն տարի, 2024-ին եւս Տարեմուտի կէս-գիշերային զանգակահարութեան աւանդութիւնը տեղի ունեցաւ Վանքի Մեծ Բակին մէջ, ուր հաւաքուած էին Միաբան Հայրեր, ժառանգաւոր սաներ եւ Սաղիմահայեր:

Ճիշդ կէս գիշերին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մեծ զանգերու զանգիւնով ազդարարուեցաւ Նոր Տարուան սկիզբը, ապա «Փառք ի բարձունս» երգով, Բարձրեալին գոհութիւն եւ փառք մատուցանելով աւետուեցաւ Նոր Տարուան մուտքը, որմէ յետոյ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Դարիպեան շնորհաւորեց ներկաները Ամանորի եւ գալիք Սուրբ Ծնունդի զոյգ առիթներով՝ մաղթելով բոլորին քաջառողջութիւն եւ յաջողութիւն: Սրբազան Հայրը յորդորեց անդրադառնալ 2023-ին կատարած սխալներուն եւ աշխատիլ այդ սխալները գալիք տարուայ ընթացքին չկրկնել:

Մեծ Բակի արարողութենէ ետք, բոլոր ներկաները մեկնեցան դէպի «Կովերու պարտէզ», ուր միասնաբար «Հայր մեր» ըսին, «Տէր ողորմեա» երգեցին եւ Լուսարարապետ Սրբազան Հայրը «Պահպանիչով» փակեց տարեմուտի կէս-գիշերային աւանդական, բարեպաշտական արարողութիւնը:

ԵՐՈՒՍԱԳԼԵՄԻ ՄԷՋ ԳՐԱՆՍԱՅԻ ՆՈՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՀԻՒՊԱՏՈՍԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՅԸ

ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ

Հինգշաբթի, 11 Յունուար, 2024-ին, ժամը 14:15-ին, Երուսաղէմի մէջ Ֆրանսայի

նորանշանակ Ընդհանուր Հիւպատոս՝ Տիար Նիկոլաս Գասիանիդէս կատարեց իր առաջին պաշտօնական այցը Սուրբ Յարութեան Տաճար:

Դիմաւորման արարողութեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան՝ ընկերակցութեամբ Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեանի եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանի:

Տիար Գասիանիդէս նախ դիմաւորուեցաւ Եաֆայի դրան առջեւ, ապա քրիստոնեայ երեք յարանուանութեանց ներկայացուցիչներու ուղեկցութեամբ թափօրով Արաբական շուկայէն քալեցին դէպի Սուրբ Յարութեան Տաճար: Չնայած յորդառատ անձրեւին, Տաճարի մուտքին Տիար Գասիանիդէս դիմաւորուեցաւ Սուրբ Յարութեան Հայ, Յոյն եւ Ֆրանչիսկեան տեսուչներու կողմէ եւ առաջնորդուեցաւ դէպի Քրիստոսի Սուրբ Գերեզման:

ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԷՋ

18 Յունուար, 2024-ին, առաւօտեան ժամը 9:45-ին, Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ: Ճամբու կիսուն Յունաց Ս. Եղիա վանքին առջեւ Լուսարարապետ Սրբազան Հօրը դիմաւորելու եկած էին ոստիկանապետը եւ պետական ներկայացուցիչներ, ապա Խորայէլեան հինգ ոստիկան ձիաւորներ ընկերացան Լուսարարապետ Սրբազան Հօր ինքնաշարժին, առջեւէն եւ քովերէն, մինչեւ Ռաքէլի գերեզմանը, որմէ ետք թափօրը առաջնորդուեցաւ դէպի Բեթղեհէմ: Քաղաքի մուտքին, ինքնաշարժերէն դուրս ելլելով, Լուսարարապետ Սրբազան Հայրը եւ Միաբանութեան անդամները քալելով յառաջացան մինչեւ հրապարակ: Բեթղեհէմի հրապարակին վրայ դիմաւորուելով Բեթղեհէմի ընդհանուր ոստիկանապետի, քաղաքապետի եւ այլ պաշտօնեաներու կողմէ, «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ, եւ Տաճարին զանգերու ղողանջին ներքոյ թափօրը բարձրացաւ Ս. Ծննդեան Տաճարի Հայկական վանքը, ուր ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Անտոն Սալման, ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն:

Յետ միջօրէի ժամը 14:00-ին Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Ս. Ծննդեան Տաճար եւ Ս. Այր: Ծրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատոյց Հոգեշնորհ Տ. Խաղ Ծ. Վարդապետ Ճունտուրեան: Ապա՝ Միաբանութիւնը բարձրացաւ Հայոց Վանք. բակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

19 Յունուար, 2024-ին կէս գիշերէն առաջ ժամը 10-ին, Գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը իջաւ Ս. Ծննդեան Այր, ուր շարունակուեցաւ «Փառք ի բարձունս»-ի երգեցողութիւնը: Պաղեստինի Կրօնից Նախարար Տիար Ռամգի Խուրի եւ Բեթղեհէմի քաղաքապետ Տիար Անտոն Սալման եւս ներկայ էին Այրի արարողութեանց: Լուսարարապետ Սրբազան Հօր Ծննդեան պատգամէն յետոյ, պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ: Աւագ սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Հոգեշնորհ Տ. Գէորգ Վարդապետ Հայրապետեան: Պատարագին յաջորդեց Զրօրհնեաց արարողութիւնը, որ կատարեց Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան, իրեն

առընթերակայ ունենալով Հոգեշնորհք Տ. Եղիշէ Վարդապետ Ուշքունեանը եւ Տ. Ներսէս Վարդապետ Ալոյեանը: Զրօրհնէքի արարողութենէն ետք հանդիսապետութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանի կատարուեցաւ Նախատօնակ, ապա ճաշու ժամերգութենէն ետք Ս. Ծննդեան Այրին մէջ պատարագեց Հանդիսապետ Սրբազան Հայրը:

Պաշտամունքներու աւարտին, առաւօտեան ժամը 6-ին, Միաբանութիւնը թափօրով եւ «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Հայոց Վանք, եւ տեսչարանին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս», ապա Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՅՈՐԳԱՆԱՆ ԳԵՏ, ԱՅՅԵԼՈՒԹԻՒԹԻՒՆ ԵՐԻՔՈՎԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԻՆ

Կիրակի, 21 Յունուար, 2024-ին, առաւօտեան ժամը 8:30-ին, Սուրբ Պատարագ մատուցուեցաւ Սուրբ Յարութեան տաճարի Հայոց Երկրորդ Գողգոթա վերնամաստրան մէջ:

Մայրավանք վերադարձէն յետոյ, ժամը 11-ին, Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ՝ Միաբան Հայրերու այցելեցին աշխարհի ամէնէն հին քաղաք՝ Երիքով եւ հանդիպում ունեցան կառավարիչի առժամեայ պաշտօնակատար՝ Մեծայարգ Տիկին Իւսրա Սուեիտին հետ:

Լուսարարապետ Սրբազան եւ հոգեւոր հայրերը դիմաւորուեցան Երիքովի կառավարութեան ողջ աշխատակիցներուն կողմէ եւ անոնց հետ ձեռնուելէ ետք ներս հրաւիրուեցան: Իր խօսքին մէջ Երիքովի կառավարիչի առժամեայ պաշտօնակատար՝ Մեծայարգ Տիկին Իւսրա Սուեիտի, յայտնեց իր ուրախութիւնը Հայոց Պատրիարքութեան պատուիրակութեան այցին առիթով եւ շնորհաւորեց Հայոց Սուրբ Ծնունդը:

Ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան ու հիւրասիրութեան համար, ապա յաջորդ տարի դարձեալ տեսնուելու յոյսով հրաժեշտ տուաւ կառավարիչի առժամեայ պաշտօնակատարին:

Հանդիպումէն յետոյ Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորած պատուիրակութեան միացան նաեւ ժառանգաւոր սաները եւ ուխտաւորները, որոնք ուղղուեցան դէպի Յորդանան գետ, ուր տեղի ունեցաւ տարեկան Զրօրհնեաց արարողութիւնը: Յորդանանեան կողմէ գետափ եկած էին Յորդանանահայոց առաջնորդ՝ Տ. Աւետիս Ծ. Վարդապետ Իփրաճեան իր գաղութի հաւատացեալներու հետ միասին:

ԷՔԻԻՄԵՆԻՔ ԱՂՕԹՔՆԵՐ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ ԵՒ ՅՈՅՆ ԿԱԹՈԼԻԿ ԱԽԵՏՄԱՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԷՋ

Երկուշաբթի, 22 Յունուար, 2024-ին, երեկոյեան ժամը 5-ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ էքիւմենիք աղօթք՝ վասն Քրիստոնէութեան միութեան: Աղօթքին մասնակից էին նաեւ Սուրբ Երկրի տարբեր քրիստոնեայ յարանուա-

նութեանց եկեղեցականներ: Հայ Եկեղեցւոյ կողմէ քարոզեց 'Դիւանապետ՝ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Քրիստոնէութեան միութեան համար էքիմենիք աղօթք կատարուեցաւ նաեւ Կիրակի, 28 Յունուար, 2024-ին, երեկոյեան ժամը 5-ին, Յոյն Կաթողիկ Աւետման եկեղեցւոյ մէջ: Հայ Եկեղեցւոյ կողմէ ներակայ գտնուեցաւ Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեան:

ԺԱՌԱՆԳԱԻՌԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՎԵՐՋԱՊԷՍ ՀԱՍԱՆ ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ

Երկուշաբթի, 4 Մարտ, 2024-ին, օրեր առաջ Սուրբ Երկիր ժամանած Ժառանգաւորաց վարժարանի ինը նոր ուսանողներ վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Գէորգ Վարդապետ Հայրապետեանի ուղեկցութեամբ ներկայացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօրը եւ ստացան Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը: Նոր ուսանողներուն Հայաստանէն դէպի Երուսաղէմ, ինչպէս միշտ, կ'ուղեկցէր Տիար Գարիկ Շահգալդեան:

Հանդիպման վերջաւորութեան Պատրիարք Սրբազան Հայրը յաջողութիւն մաղթեց նորեկ ժառանգաւորներուն:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ԹԷՈԴՈՐՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Շաբաթ, 22 Մարտ, 2024-ին, հինգ տարի ընդմիջումէն յետոյ Սուրբ Թէոդորոս եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Երեկոյեան ժամերգութիւն, ապա հանդիսապետութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանի՝ Սրբոյն Թէոդորոսի Զօրավարի նախատօնակը:

Տօնի առաւօտուն, 23 Մարտ, 2024-ին, Սուրբ Թէոդորոս եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Առաւօտեան ժամերգութիւն, ապա Սուրբ եւ Անման Պատարագը մատուցց Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Սուրբ Թէոդորոս Զօրավար համաքրիստոնէական սուրբ է, որուն յիշատակութիւնը Հայ Եկեղեցին կը տօնէ Մեծ Պահքի առաջին շաբաթ օրը: Ըստ վարքագիրներու ծնունդով Ամասիա քաղաքի Սարու գիւղէն էր ան, քրիստոնեայ բարեպաշտ ծնողներու զաւակ: 4-րդ դարու սկիզբը Դիոկղետիանոսի հալածանքներու ժամանակ, փաստելու համար կուռքերու հնարովի եւ կեղծ ըլլալը, գիշերով կրակի կը մատնէ հեթանոսական Ռէա շաստուածուհիի մեհեանը: Այս արարքին համար բանտ կը նետուի եւ մեծագոյն շարշարանքներէ յետոյ 306 թ. կը նահատակուի՝ այրուելով կրակի մէջ:

Կը պատմուի թէ այս հրաշակերտ եկեղեցին, ուր մատուցուեցաւ տօնի Սուրբ եւ Անմահ Պատարագը, կառուցել տուած է Կիլիկիան Հայաստանի Հեթում Ա. Թագաւորը (1226-1270)՝ ի յիշատակ իր Թորոս որդւոյն, որ եգիպտացիներու դէմ մղուած Մառիի ճակատամարտին սպաննուեցաւ 1266-ին: Երկրորդ վարկածի մը համաձայն, որն աւելի հաւանական կը թուի, եկեղեցին կառուցուած է Հեթում Թագաւորի երկրորդ որդւոյն՝ Լեւոնի կողմէ՝ ի յիշատակ իր Թորոս եղբօր: Լեւոն ուխտի եկած է Երուսաղէմ, երբ Մա-

ռիի ճակատամարտին գերի իյնալով Եգիպտոս կը տարուէր եւ իր փափաքին վրայ իրեն թոյլ տրուած էր ուխտագնացութիւն կատարել:

Սուրբ Թէոդորոս եկեղեցին հայկական միջնադարեան տիպական պազիլիքա է, որուն Աւագ Սեղանի Տիրամօր պատկերը արուեստի ընտիր գործ մըն է. նոյնպէս խաչկալը, որ նման է Սրբոց Յակոբեանց Մայր տաճարի խաչկալին: Նոյն արուեստով խաչկալ մըն ալ Շղթայակիր Պատրիարք զետեղած է նաեւ Ասորոց Սուրբ Մակար եկեղեցիին սեղանին վրայ: Խորանին աջ կողմի սանդուխները կը տանին Սուրբ Մերկերիոս մատուռ, ուրկէ կարելի է անցնիլ Սուրբ Յովհաննէս Մկրտիչի մատուռ, որը որպէս աւանդատուն կը ծառայէ:

1897 թուին Յարութիւն Վեհապետեան Պատրիարք իր անձնական ծախքով շինել կու տայ 16 դարաններ եւ կը զետեղէ Սուրբ Թէոդորոս եկեղեցւոյ մէջ, երկաթեայ վանդակով կը զատէ, որպէսզի պաշտամունքներու ժամանակ հաւատացեալներ հեռու մնան անոնց կռթնելէ եւ վնասելէ: Այս դարաններու մէջ մինչեւ 2018 թուականը կը պահուէին Ս. Աթոռին ձեռագիր մատեանները, խոնաւութենէ եւ ցեցերէ զերծ պահելու համար զանոնք: Մինչ 1897 թուականը ձեռագիր մատեանները կը պահուէին տանիքին վրայ գտնուող սենեակներէն մէկուն մէջ, Մայր տաճարին եւ Ս. Թէոդորոս եկեղեցիին մէջտեղ եւ Հեթում թագաւորի կոչուած սենեակներուն մէջ, հաւաքուած էին նաեւ տպագիր հատորները, որոնք յետագային փոխադրուեցան Կիւպէնկեան Մատենադարան, իսկ շուրջ 4000 ձեռագիր մատեանները եւս 2018 թուականին առժամապէս փոխադրուեցան Կիւպէնկեան Մատենադարան մինչեւ Հին Լուսարարապետարանի՝ որպէս Ձեռագրատուն նորոգուիլը:

1930-1941 թուականներուն Ս. Թէոդորոս եկեղեցին գործածուած է իբրեւ նորընծայ արեղաներու քառասունքը անցընելու վայր, ուր կանոնաւորաբար պաշտամունք կատարելով եւ հոգեւոր գրոց ընթերցումներով եւ առանձնական աշխատանքներով կը պարապէին նորընծաները:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ

